ԱԲԳԴԵԶԷԸԹԺԻԼԽԾԿՀՁՂՃՄ
ՅՆՇՈՉՊՋՌՍՎՏՐՑՒՓՔՕՖ
աբգդեզէըթժիլխծկհձղճմյնշոչ
պջռսվտրցւփքօֆև
(0123456789) .,;: ?!#&֍֏
▶▶▶◀◀◀▲▼↓←→↑↖↗↘↙

Դոնալդ Տուսկ. «Ղարաբաղյան հիմնահարցը ռազմական լուծում չունի»

«Ղարաբաղյան հակամարտությունը բացառապես խաղաղ ճանապարհով պետք է լուծվի, իսկ Եվրամիությունը պաշտպանում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը». սրանք էին այն հիմնական ուղերձները, որոնցով այսօր Բաքու էր ժամանել ԵՄ ղեկավար մարմնի Եվրոպական խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկը:

Ադրբեջանի մայրաքաղաքում ԵՄ ղեկավարը հանդիպեց Իլհամ Ալիևի հետ նախ բանակցություններ անցկացնելով ընդլայնված կազմով, պատվիրակությունների մասնակցությամբ, ապա նաև դեմ առ դեմ ձևաչափով:

«Ղարաբաղյան հիմնահարցը] չունի ռազմական լուծում, այլ բացառապես քաղաքական կարգավորում հիմնված միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների վրա: Եվրամիությունը շարունակում է լիակատար աջակցություն հայտնել Մինսկի խմբի համանախագահների գործադրած ջանքերին, որոնք կենտրոնացել են հարցի արդարացի և տևական լուծման վրա, որի հիմքում պետք է լինեն Հելսինկիի հռչակագրի հիմնարար սկզբունքները», - հայտարարում էր Դոնադ Տուսկը հարկ համարելով սակայն հատուկ ընդգծել - «Եվրամիությունը պաշտպանում է Ադրբեջանի ինքնիշխանությունը, անկախությունը և տարածքային ամբողջականությունը»:

Եվրոպական խորհրդի նախագահի խոսքով, ի դեպ, Բրյուսելը պատրաստվում է ջանքեր գործադրել հայկական և ադրբեջանական հասարակություններին ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ լուծմանը նախապատրաստելու ուղղությամբ:

«Եվրամիությունն արդեն իսկ աջակցում է խաղաղության հաստատմանն ուղղված գործողություններին և պատրաստ է աջակցել նաև բնակչությանը խաղաղությանը նախապատրաստելուն ուղղված կոնկրետ քայլերին», – նշում էր Դոնալդ Տուսկը: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը Եվրոպական խորհրդի նախագահի հետ բանակցությունների ավարտին կրկին պնդում էր, որ ղարաբաղյան կարգավորման գործընթացում առաջընթացի բացակայության գլխավոր պատճառը Երևանն է: «Հայաստանի ապակառուցողական դիրքորոշումն է այն հիմնական պատճառը, որի հետևանքով հակամարտությունը դեռ լուծված չէ: Վստահ եմ, որ միջազգային հանրության և ԵԱՀԿ Մինսկի խմբի ջանքերը պետք է ուղղված լինեն խնդրի շուտափույթ լուծմանը: Ստատուս քվոն անընդունելի է և պետք է փոխվի, այդ փոփոխությունն իր հերթին Ադրբեջանի տարածքների դեօկուպացիայի սկիզբն է նշանակում», - նշում էր Ալիևը: Ադրբեջանի նախագահը այսօր կրկին հայտարարում էր:

A12		km
↑	ԵՐԵՎԱՆ	25
←	ԳՅՈՒՄՐԻ	50
←	ՎԱՆԱՁՈՐ	62

↑ Տերմինալ A B C

← Կայարան

↙ Մեքենաների վարձույթ